

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է տոհմական 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիարժեքով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խառնակով. տողաւորները 10 կոպեկ.
Տէլէֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կովկասագիտութեան կարիքը. — Ներքին Տե-
ստիքի մասին. Դատաւարական դաշինքից. Մի
խորհրդի բացատրութիւն. Հայոց ներկայացու-
մանը. Օպերային ներկայացումները. Նամակ
Մոսկովայից. Նամակ Բաթումից. Նամակ Կրաս-
նովոդարից. Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՏԻՔԻՆ. Հակաթուրքական կոնֆերան-
սի. Արաբները լուրեր. — ՀԵՆՈՒՄԻՆԵՐ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ

Մի ժամանակ Կովկասի մասին շատ քիչ
տեղեկութիւններ կային գրականութեան
մէջ, և իւրաքանչիւր ոք, որ առանձնապէս
հետաքրքրվում էր Կովկասով, ստիպված
էր անձամբ ճանապարհորդել Կովկասի դա-
նապահ մասերում՝ փոքր ի շատ բաւարար
գաղափար կազմելու համար նրա մասին
կիսով մի մեր երկրի դեռ լաւ չէ ուսումնա-
սիրված, այժմ էլ մեծ կարիք կայ գիտական
հետազոտութիւնների, այժմ էլ մեծ զգու-
նիք ամեն մի քայլում վիճակագրական և
կենցաղավարական տեղեկութիւնների մեծ
պակասութիւնը, բայց և այնպէս մինչև
այժմ տեղի ունեցած ուսումնասիրութիւն-
ները, հատկապէս գիտական հետազո-
տութիւնները, ճանապարհորդների նկա-
տողութիւնները ամբարել են այնքան
իւրիշ, որ կարելի է փորձ փորձել կո-
վկասագիտութեան մի հետաքրքրական
աշխատութիւն տալու հասարակութեան:

Իսկ երբ այդպիսի մի աշխատութիւն կը
ստանայ իրաւորութիւն, այն ժամանակ
կը պարզվեն այն հիմնական խնդիրները,
որոնք կարօտ են առանձին ընտելութեան,
և կը հնչանայ ապագայ հետազոտու-
թիւնների ծրագիրը: Այդպիսի մի աշխա-
տութիւն, մի տեղ ամբողջով մինչև
այժմ կատարածը, հարաւորութիւններ կը
տայ ամեն մի հետաքրքրվողի ծանօթա-
նալ այն երկրի հետ, որտեղ նա ապրում
է, և այն ուսումնասիրութիւնների հետ,
որոնք արդէն արվել են նախկին աշխա-
տողների շնորհիւ:

Ոչ մի տեղ գուցէ այնքան անգիտակ
չեն մարդիկ իրանց երկրի հանգամանե-
րին և նրանց մէջ ապրող ժողովուրդների
կենսական, որքան մեր երկրում: Իսկ այդ
վիճակը շատ ցաւալի է ոչ միայն ընդհա-
նուր տեսակետով, իբրև լոկ հետաքրքրու-
թեան հայեցակետով, այլ և գործնական
գիտութեան: Մեր տգիտութիւնը մեր
երկրի վարակերութեամբ շատ զգաւորու-
ման և աւաղաղիմութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻՔԻՆ

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՀԻՐԺԻԾ

Մեղադրվող Նիկիչ վարդապետի պաշտպան
երդուհայ հաւատարմատուր Տիգրան Յովհան-
նիսեան իր պաշտպանողական ճառի մէջ յայտ-
նեց, որ մեղադրանքի կէտերը չեն համապա-
ստեղծում նրան, ինչ որ Մուրադեան գրել է
«Մշակում»-ի. իսկ ինչ որ նա գրել է, այդ ամե-
նը հաստատվում է ներկայացրած թղթերով,
վկաներով, նոյն իսկ մեղադրող կողմի վկանե-
րով: Նա, մի առ մի յիշելով փաստերը, որոնք
պաշտպանական են, շարունակեց. «Արեւմտե մեզ
աշխարհը պաշտպաններ, որ այն բոլորը, ինչ
որ գրել է Մուրադեան վարդապետը «Մշակում»-
ի մէջ է, և որ, յամենայն դէպ, Նիկիչ վար-
դապետը ոչ միայն ոչինչ չէ հնարել, այլ և
թերեւս ամբողջով չէ վերաբերվել ուրիշի պատ-
կին: Մենք ապացուցեցինք, որ Նիկիչ վարդապե-
տը բարեխղճօրէն համոզված է եղել, որ իր
բոլոր գրածները ճիշդ են: Եւ կը խնդրէի

ձեզ ուշադրութիւն դարձնել նաեւ հետեւեալ
հանգամանքի վրա. զրպարտութեան գործերում
նշանակութիւն ունի յօդուածագրի նպատակը
և այն պայմանները, որոնց մէջ նա գրել է իր
յօդուածը: Այդ յօդուածը հերքում է Ջամի-
լադեանի յօդուածի դէմ, որի առիթով մենք
արդէն գործ ենք սկսել նրա դէմ: Նիկիչ վար-
դապետը, իր յօդուածը գրելիս, միմյան պաշա-
պանվելիս է եղել Ջանիփոյադեանի գանգատի և
յօդուածի մէջ պարունակված զրպարտութիւն-
ների դէմ: Բացի այդ՝ Նիկիչ վարդապետը, իբ-
րև Կարսի թեմի փոխանորդ, չէր կարող լաւ-
բեր լրագրութեան մէջ ընկնում էր Կաղզուանի
եկեղեցու շինութեան և նրա առիթով ծագած
աղմուկների՝ ահագին կարեւորութիւն ունեցող
հարցը: Ուստի և Կիմիլով այն բոլորը, վեր-
ջեր եւ ասացի, եւ խնդրում եմ դատարանից
արդար ճանաչել Նիկիչ վարդապետ Մուրա-
դեանին:

Նախագահը վերջին խօսքը տալիս է մեղա-
դրված Նիկիչ վարդապետ Մուրադեանին, որ
արտասանում է հետեւեալ ճառը:

Պ. Դատաւորներ.
Պ. Ջանիփոյադեանի փաստաբանը առանձնակի
չեղանդով, որ եւ արդիւ շատ մօտ եմ ընտել-
ունի Կաղզուանի եկեղեցու շինութիւնը, լրան-
նում եմ առել նոյն իսկ սեւ աշխատանք, չէ հաշ-
վում այն մօթի հետ, որ եւ առանց շահա-
խնդրութեան եմ այդ արել, այլ ասացել եմ
Ջանիփոյադեանից վարձատրութիւն ամսական
մի հարիւր ռուբլի:

Այն, եւ արդիւ շատ մօտ եմ ընտելունի
Կաղզուանի եկեղեցու շինութեան գործը. հէնց
ինքը՝ պ. Ջամիփոյադեանն էր պատճառը, որով
հետեւ եկեղեցու շինութիւնը դարձել էր կռի-
ւեւ հայոյանքի ասպարէզ և իրանց բոլոր աշ-
խատաւորները փախուցան էին տալիս: Հարցե-
լիս, երբ կնոջն աշխատակիցուց յետոյ փա-
խել եկել էր Կարս և խնդրում էր գնալ Կաղ-
զուան եւ հող տանել, որ շինութիւնը կանգ
չառնէ, ինչ էի պատասխանում իրան եւ քանի
որ տեղիցս չը շարժվեցի Այն, չէի գնում և
գնալ չէի կամենում, ասելով իրան, որ եւ չեմ
կարող հսկել եւ հող տանել քարէ եկեղեցու
շինութեան վրա, երբ նա քանդում է իր ըն-
տանեկան եկեղեցին, որ եւ չեմ կարող ու չեմ
ուզում ընդունել այն մարդու զօնը, որը մի
կողմից եկեղեցի է շինում, իսկ միւս կողմից
կնոջն այդ կացութեան հասցնում: Եւ մինչև
նա չընդունեց ասպարէզած պայմաններս, մին-
չեւ չը խոստացաւ վերը դնել այդ անտանիքի
կացութեան եւ Կարսից չը մեկնել, թեւեւ
ոչ մի պայման էլ չը կատարեց: Գործիս մէջ
կան հետադիւրսի իրանց, գործակալ քահա-
նայից, եւ նամակներ, որոնցով ինձ կանչում էին
եւ յայտնում, որ եթէ չը գնամ շինութիւնը կը
դադարի կամ դադարել է: Խնդրեմ ուշադրու-
թիւն դարձնել նրա՝ Վեհափառ Կաթողիկոսին
տուած բողոքին, այնտեղ եւ ասում է, որ ո-
րոշել է ամբողջ գնալ-գալու համար ճանա-
պարհաւոր կամ վարձ մի հարիւր ռուբլի
ամսական: Երբ արդեւ յայտարարել է, որ
տուել է, բայց ինքեւմ ուշադրութիւն դարձ-
նեց այն հանգամանքի վրա, որ իմ գրպանիցս
ծախածները տուել է միմյան Մուրադե-
անից: Երբ արդեւ յայտարարել եմ և նկարագրել, թէ ինչպէս համաձայնեցի
ստանալ նրանից իմ գրպանիցս ծախած 245
ր. 56 կ. գրեցի նոյն ցուցակի տակ, թէ ինչ-
պէս պարտի ինձ վարձատրելու փորձը մի-
տեղի մի քանի անձանց ներկայութեամբ, վը-
կայ Ստամբուլի իշխան և պ. Ջանիփո-
լադեանի յետ տարած փողերը այն գումարն
էին կազմում, որով նա կարծում էր չլացնել
ինձ, բայց այդ ցուցակը այսօր չեն ներկայացրել,
այլ բերել են մի ուրիշը, որով դեռ ինձ պարտ
են մնում ստացան 245 ր. 56 կ. Վեհափա-
ռին տուած բողոքը, ստորագրած ցուցակ չը
ներկայացրել և իրանց ներկայացրած հաշուով
դեռ ինձ պարտ մնացած լինելը կարծեմ ապա-
ցոյց են, որ ոչ թէ եւ նրանից վարձատրու-
թիւն չեմ ստացել, այլ բանաւորներն եւ վար-

դաներն տուած էլ միմյան Մուրադեան օրը-
բազանի գալուց յետոյ եմ ստացել, եւ այն՝ ա-
կամայ, որովհետեւ հրամայած էր տալ եկե-
ղեցական գումարից:

Թէ ինչպէս էր նա վերաբերվում ժողո-
վրդին, այն ժողովրդին, որի համար եկեղեցի
էր շինում,—այդ երեւում է հէնց իրան
Վեհափառ Կաթողիկոսին տուած բողոքից,
որտեղ յիշելով որ իրան հետաքրքր է ծը-
խական ժողովը, մեծամասնութիւնը, նա հարց
է տալիս. «Բայց ովքեր էին այդ մեծամաս-
նութիւնը, եթէ ոչ խաթաւած մարդիկ, աղ-
քաւորներ, յայտնի մշակականներ, գործակա-
ններ, անբարոյականներ եւ օրական հացի կարօտ-
ներ»: Պարտի հաւատարմատուն ասում է, որ

զրպարտել եմ, թէ նա ժողովրդին անպատ-
ւել է, բայց չէ իմանում, որ պ. Ջանիփոյադեա-
նը գրաւոր այդպէս է մկրտել այն ժողովը-
ղին, որի համար ուզում էր եկեղեցի շինել, եւ
այդ ժողովրդի գալուց վերադարձել է ինձ, որ
եւ եմ գրաւոր եւ այդ՝ 100 մանէթ վարձատ-
րութեան համար: Նիկիչ է արդեւ մի դէպք,
որ ժողովուրդը մի փոխանորդի անձնական շա-
հերի համար այդքան վրդովի. միթէ ժողո-
վուրդը աչք չունէր, զիտակցութիւն չունէր,
կամ գուցէ եւ մաքնիս էի: Ոչ, բոլորովին ոչ,
ժողովուրդը բոլորովին էր երկար համբերու-
թիւնից յետոյ, բոլորովին մի շարք տխուր
դէպքերից յետոյ եւ այլ եւս տանել չը կար-
ողացաւ տիրող դրութիւնը: Առաջին ժողովի
ժամանակ, երբ պարտի հասցէին ոչ մի վրա-
ւորական բառ չէր արտասանած, երբ ժո-
ղովուրդը որոշեց վերադարձնել նրան ծախ-
ած գումարը եւ շարունակել շինութիւնը, նա, փո-
խանակ ուրախանալու որ իր նկարագրած խա-
թաւած ամբողջ օրը գիտակցութեան եւ
պարտաճանաչութեան հասած, ուզում է շա-
րունակել իր եկեղեցու շինութիւնը, փոխանակ
ասելով, թէ, օրեկը եղբայրներ եւ որդիք, եւ
կարծում էի, թէ դուք միջոց չունեիք, դուք
չէիք կարող լինել ձեր եկեղեցին եւ նրա հա-
մար ինձ վրա վերցրել շինութիւնը. ուրախ եմ,
որ ինքեւմ չը ուզում լինել եւ աւարտել, եւ
նուրբում եմ ցայսօր արածս, շարունակեցե՛ք, իսկ
եւ մնացած փողով մի ուրիշ բան կանեմ, փոխա-
նակ այսպէս ասելով, ինչ է անում կազմում է
հաշիւ այն ձեւով, ինչպէս անձամբ տեսաւ այսօր
եւ պահանջում է առջաւոր եւ հացի կարօտ ժողո-
վրդից՝ 27,375 ր. 6,500 ռուբլու փոխարէն:
Ահա ձեզ գեղեցիկ բարեբար ժողովուրդը չէ
հանդարտվում, ծերունաւորը Հայրապետը ըս-
տիպում է ինքուր անձամբ Կաղզուանի գնալ,
ժողովուրդը ցոյց է տալիս, որ ոչ խաթաւած
է եւ ոչ աղքատ. Վեհափառ Հայրապետը հաշ-
տեցնում է ժողովրդին եւ պ. Ջանիփոյադեա-
նին. թայտարում է վերջինիս շարունակել շի-
նութիւնը, եւ նա, որ դեռ 1900 թ. ձմեռը չը
հասած ուզում էր աւարտել շինութիւնը եւ
ազատել ինքեւմ ժողովրդին, խաբում է նոյն
իսկ Վեհափառ Կաթողիկոսին եւ մինչև այսօր
իմ մեկնելուց յետոյ՝ ոչ մի քար չէ դրել այլ
եւս շինութեան վրա, ինչպէս ցոյց տուին հէնց
իր վկանները: Նրա հայհոյանքների մասին խնդ-
րեմ ի նկատի առնել իմ ներկայացրած երդմա-
կան ընկնելիւնը եւ Կարսի հայտարար դատա-
ւորի վճիռը: Ահա այս բողոքից յետոյ պարտը
դեռ անուանարկում է ինձ եւ վրաւորվում,
երբ եւ խօսում եմ ձիւղ է, եւ հոգեւորական
եմ, աւետարանի աշակերտ, եւ ներող եւ հա-
բերող պէտք է լինեմ, բայց ամեն բանի չափ
ու օտանալու կայ: Եւ չէի կարող իմ Փրկչիցս
անելի համբերող լինել, որին երբ առանց պատ-
ճառի ապաւանկեցին, դարձաւ եւ ասաց ապա-
կողին, «Եթէ եւ մի վատ բան արի, ցոյց տուր,
ապա թէ ոչ ինչն եւ խիղճում, իսկ եւ սոսկ
մարդ էի, մարդկային բոլոր թերութիւններով,
կարող էի լինել, երբ կատարվում էր այս բոլո-
րը, երբ ստեղծվել էր մի ամբողջութիւնը դու-
րութիւն եւ իմ աչքը առաջ մարդիկ աշխատու-
մէն, եւ հայհոյանքի ենթարկվելուց զատ՝ առ-
ված էին մնում, եւ այն էլ եկեղեցու շինու-
թեան վրա ինձ հարկադրեցին, եւ եւ խօսեցի,

խօսեցի դուրս ճամարտութիւնը, եւ դուք, պա-
րոն դատաւորներ, յոյս ունեւ, որ ձեր վճռով
ցոյց կը տաք այսօր, որ ճամարտութիւնը ոչ
մի տեղ, ոչ մի ուղից չէ յաղթվել եւ չէ դո-
ղացել եւ երբեք էլ չի լաղթվի եւ չի դողայ:

Դատարանը հետեւում է խորհրդակցական
սենեակը եւ, կէս ժամից յետոյ դուրս գալով,
յայտնում է իր դատաւճիռը, որով արդարաց-
նում է Նիկիչ վարդապետին:

ՄԻ ՓՈԳՐԻՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բազուի հայոց դերասանական խմբի ընթի-
սօր պ. Արմէնեան ուղարկել է մեզ հետեւեալ
նամակը. «Մշակ» 225 համարում, «Մամուլ»
վերնագրի տակ ապված յօդուածի մէջ, որտեղ
յարգելի պ. յօդուածագիրը դատողութիւններ է
անում Բազուի հայ թատրոնի ներկայ վիճակի
մասին, ի միջի այլոց, կային հետեւեալ տողե-
րը. «Բազու»-ի դրամներից մենք տեղեկանում
ենք, որ առաջին ներկայացմանը բեմի վրա
տեղի ունէին այնպիսի անկարգութիւններ,
որոնք միայն սառցանի կարող են յաճախու-
նել: Նախ՝ մինչև այսօր դրված ոչ մի ներ-
կայացման միջոցին, նոյն իսկ որ եւ է ամենա-
փոքր անկարգութիւն տեղի չէ ունեցել ոչ
բեմի վրա եւ ոչ էլ բեմից դուրս: Իսկ երկ-
րորդ՝ իզուր փնտնեցի «Բազու»-ի էջերի մէջ
վերոյիշեալ տողերը արդարացող որ եւ է աղ-
նարկութիւն: Ուստի թոյլ տուե՛ք ինձ խնդրել
ձեր թերթի միջոցով յարգելի պ. յօդուածա-
գրից՝ պարզել այդ թերեւստեղութիւնը եւ բա-
ցատել, թէ «Բազու»-ի որ տողերից է ներ-
շնչվել այդպիսի ծանրակշիւ ենթադրութիւն-
ներ անելու համար:

Թատրութեամբ կատարում ենք պ. Արմէ-
նեանի խնդրը: «Բազու» լրագրի այն յօդու-
ածում, որ խօսվում է առաջին ներկայացման
մասին, նկարագրած են երկու այսպիսի դէպք:
Օր. Աղամեանը պիտի երգէր, բայց նրա փոխ-
րէն երգում է մի ուրիշը բեմի ետեւից. օրիոր-
դը կանգնած է երեսը դարձրած դէպի հասա-
րակութիւնը, ձեւագծում է, թէ ինքն է երգում,
եւ ձայն չը հանելով՝ բաց ու խուփ է անում
բերանը: Հետաքրքիրութիւնը այդ նկատում է եւ
սկսում է ծիծաղել: Բեմից հեռու շատ իրաւա-
ցի կերպով նկատում է, որ կարելի էր օր.
Աղամեանին կանգնեցնել այնպէս, որ նրա
դէմքը դէպի հասարակութիւնը դարձրած չը
լինէր, կամ աւելի լաւ կը լինէր, եթէ օրիորդը
նստած լինէր դաշնակի առաջ: Այս մէկը, Նոյն
բեմից հեռու տեղից, իւրաքանչիւր անգամ,
վարագրողը բարձրացնելիս, լսվում էր մի խա-
ցուցիչ, ցնցող թրխկոց: Ասում են, գրում է
բեմից հեռու, թէ Եւրոպայում այսպէս են ա-
նում, բայց այս դէպքում լաւ կը լինէր, որ
մենք ասեցի մնային:

Ահա ինչը մենք անուանեցինք անկարգու-
թիւն. կարգաւորութիւն անուանել այդ բաները
մենք չէինք կարող եւ չենք կասկածում, որ
պ. Արմէնեանը համաձայն կը լինի մեզ հետ:
Ուրիշ բան է, եթէ «Բազու»-ի բեմից հեռու
ձիւղ չէ հաղորդել իրողութիւնները. բայց այդ
դէպքում մենք մեզ չունենք. մեր արածը միայն
այն է, որ լրագրի մէջ արձանագրած փաստերը
մենք անուանել ենք անկարգութիւն: Արդեւ
իրաւունք չունենք:

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

Ներկայացրել, հոկտեմբերի 28-ին, տեղի ու-
նեցաւ հայոց ինքնորդ ներկայացումը: Հայոց
դրամատիկական ընկերութեան խումբը ներկա-
յացրեց «Տոնածառ» կատակերգութիւնը, մի
գործողութեամբ, Վ. Նեմիրովիչ-Նանկինսկի,
թարգմանութիւն Տ. Յովհաննիսեանի, եւ «Մի
բոլոր հանգիստ չունեմ» ֆարսը Յ. գործողու-
թեամբ: Մեծանկարի, թարգմանութիւն Յ. Ա-
բելեանի:

«Տոնածառ» մէջ պ. Պետրոսեան՝ Բաբկովի
դերում՝ ցոյց տուեց, որ նա անչաղ կերպով
հետեւում է այն կանոնին, թէ դեմասանը շա-

րունակ եւ անընդհատ պէտք է ձգտի կատարելագործվելու, մշակելու իր ձիրքերը եւ միայն այդ կամօնը պահպանելով կարող է իր կոչման բարձրութեան վրա կանգնած մնալ: Կարգ երեւում էր, որ այդ դերասանը նոյն իսկ փոքր դերերում զանց չէ աւելում այդ կանօնը: Տիկին Մայրուբեան, որ կատարում էր ջանքեր երկրորդ կնոջ կամ խորթ մոր՝ Վերա Իվանովնայի դերը, բաւական մասնակց էր իր դերի վրա եւ շատ լաւ կատարեց: Երբեք չէր անցնում իր խորհուրդը կը տանք լուրջ ուշադրութիւն դարձնել հայ լեզուի մշակութեան եւ առողջամտութեան վրա: Գալով ՎԻՐ ԲՈՒՆ Կանգնած չունենալ ֆարսին, մենք ժամանակի կորուստ ենք համարում խօսել նրա մասին, ինչպէս ժամանակի կորուստ էր այդ նաեւ թատրոնի հասարակութեան համար: Զիշէ է, պ. պ. Տէր-Դուռնի եւ Յ. Արեւելան շատ գեղեցիկ կատարեցին իրանց դերերը, բայց մենք եւ, երեւի, մեզ հետ նաեւ հասարակութիւնը չը կարողացանք ըմբռնել, թէ ինչ միտք ունէր այդպիսի մի դատարկ, անպէտք պիտեայի վերակրել հայոց հասարակութիւնը: Տալ շարքով մի անգամ ներկայացում, ներկայական եւ բարոյական գոնազան գոնազան թիւններ աւել աշխարհի անգոյն, անմիտ պիտեանք դնելու բնութիւնը, այդ կը նշանակէ մի ձեռքով չիտա՞ծը միւս ձեռքով քանդելու: Զուե՛ք ինքնուրոյն պիտեանք, ստիպված էք դիմել թարգմանականներին, ընտրեցէք այն ժամանակ ուսուցիչ եւ երօտական ընդհատումներից այնպիսի թատրոնական գործունէութիւն, որոնք որ եւ է կը թիւն, հրահանգիչ նշանակութիւն ունենան, որ եւ է իրենց կամ միտք պարունակին իրանց մէջ:

ՕՊԵՐԱԹԻՆ ՆԵՐԿԱՍՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի, առաջ 28-ին, օպերային խումբը երկրորդ անգամ խաղաց Բիզէի «Les pêcheurs des perles» (Մաշգարիս որսողներ) օպերան:

Եթէ չենք սխալվում, Բիզէի այս օպերան շատ վաղուց է դրվել Թիֆլիսի բեմի վրա իտալերէն լեզուով: Սերաֆիմովի եւ Երաշտակա՛կան ձեւերի ոչ մի նմանութիւն չը կայ այս օպերայի եւ նոյն հեղինակի գրած Կարմէնի մէջ: «Les pêcheurs des perles» օպերայի մէջ նկատուում ենք աւելի իտալական չիօրայի ազդեցութիւնը, այն ինչ Կարմէնը ֆրանսիական երաժշտութեան չիօրայի մի շնչով է: Անկասկած Կարմէնը անհամեմատ տաղանդավոր է գրված, բայց եւ այնպէս այս օպերայի մէջ կան առանձին առանձին հրաշալի եղանակներ եւ գեղեցիկ խմբական երգեցողութիւններ, որ կօնցերտական ընդհատումների զարդ կարող են լինել: Առաջին գործողութեան մէջ Բիզէն իր տաղանդով պարզ փայլում է հսկում օրկեստրով կայով եւ մեղօղիական եղանակներով իսկ միւս գործողութիւնները անհամեմատ թույլ են գրված եւ մի քիչ ձգձգած:

Օպերան առհասարակ լիբրե գրուածք է եւ դրա համար էլ պահանջվում են լիբրե ձայններ: Մանաւանդ Նադիրի դերը, որ դժուար երգելու է, եւ պահանջվում է շատ մշակված ձայն: Միակ դերասանը այդ դերում Մադրին է, որ չը նայելով ծերութեանը՝ մինչեւ հիմա հիացնում է այդ օպերայում իր օջանի ձայնով: Չը նայած Նադիրի դերում Բոնաչիլը ամեն ջանք գործ էր դնում ձայնը յարմարեցնել մեղմ եղանակներին: Բայց յաճախ այդ չէր աջողվում: Այդ դերը գումար լեզուի դեր է եւ ոչ յարմար պարոնի ձայնին: Եւ Եթէ դերը չը փչացրեց՝ դրա պատճառը այն է, որ տաղանդավոր եւ հասկացող դերասան է եւ գիտէ մի կերպ տանել դերը:

Լէյլայի դերում Վանդեր-Բրանսը անհամեմատ լաւ կը լինէր, եթէ վերին նօտաները քիչ ամփական չը հնչէին: Եւ քիչ զգուշանաւ այդ նօտաները վերցնելու: Բրօքին կրակոտ երգով եւ զգացված խաղով աչքի էր ընկնում: Զուգորդի դերում:

Օրկեստրը եւ խումբը այդ դիշեր հասան կատարելագործութեան գագաթնակէտին: Չը նայած, որ ամեն կերպ խնամք էր դրած դրել օպերային ընկերութիւնը՝ այս օպերայով գրաւելու հասարակութիւնը, բայց եւ այնպէս այս անգամ եւս ժողովուրդը անտարբեր էր գրանցվել դէպի օպերան եւ քիչ էր եկել:

Մամալան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Հոկտեմբերի 18-ին
Վերջին տարիների ընթացքում հայոց թեմական դպրոցների շրջանաւարտների, մինչեւ ան-

գամ քաղաքային դպրոցների վերջապահների մէջ նկատվում է մի ընդհանուր միտքաբանական հոսանք: Այդ այն է, որ հայ երիտասարդները, աւարտելով միջնակարգ կամ ստորին դպրոցներ, չեն բաւականանում իրանց ստացած կրթական պաշարով, այլ ձգտում են դէպի վեր, դէպի բարձրագոյն ուսում: Եւ թէպէտ մեծ մասամբ անդամադրելի արգելքների են հանդիպում, որոնցից մէկը կարելի է եւ պէտք է մտնել նրանց ներթափանց անապատի դրութիւնը, սակայն պէտք է ուղարկութեան խնամովանել, որ այդ երիտասարդները, բոլոր խոչընդոտների նկատմամբ յաղթող հանդիմանալով, վերջի վերջոյ հասնում են իրանց բաղձանքին:

Այդ տեսակ երիտասարդների մեծ տոկոսը, անկասկած, Կովկասի դանազան քաղաքներում է պատրաստվում: Օրինակ, ներկայումս Մոսկվայում հառուճութեան վկայական ձեռք բերելու համար պատրաստվում են տասնեակներով:

Բայց ցաւելով պիտի խոստովանել, որ այդ գեղեցիկ ցանկութեամբ առգործված երիտասարդութիւնը արժանաւոր ընդունելութիւն չէ դառնում մեր ունեւոր, դրամատիկ դասակարգի կողմից: Փողաւորները հրաժարվում են ներթափանց օժանդակելու այդ երիտասարդներին:

Այժմ Մոսկվայում եղող եւ հասունութեան վկայական համար պատրաստողների մեծ մասը գտնվում է ներթափանց նեղ շրջանի մէջ, իսկ այստեղի համարեալ ամբողջովին հարուստ, դրամատիկ գաղութը հրաժարվելով հրաժարվում է դրանցից գոնէ մէկ-երկուսին օգնել:

Եւ անա հայ աղքատ երիտասարդը օտարութեան մէջ, անտնիք երկրում, անտես անտնիք անպիտան դժուարութիւնները, աշխատում է, հանգիստը մոռացած, եւ չնորհիւ անհամար վատանող վայրենացների կորցնում է իր ֆիզիկական առողջութիւնը:

Զիշէ է, նրանց անկեղծ ձգտումը շատ անգամ համակրելի եւ գովելի է թուում մեր փոքրագոյններին, սակայն բաւական չէ միայն համակրել եւ գովել լաւ, պէտք է գործ դնել հնարաւոր ջանքեր, պէտք է հովանաւորել, նպաստել, օգնել, որպէս զի լաւ գործընթաց եւ պրտաւոր տայ...

Ուսանող Հ. Համարձումեան

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 25-ին

Բժիշկ Տրիանգաֆիլիդիսի շնորհակալութիւն յայտնելու կամ չը յայտնելու հարցը դնալով սկսեց աւելի բարդանալ եւ խառնվել այն անվերջ ինտրիգների հետ, որոնք այնքան երկար տարիներ շփոթում եւ անհանգստացնում են տեղական մարզերը:

Ո՞վ է այդ պատուհասային շփոթութեան եւ խառնաշփոթութիւնների պատճառը: Ո՞վ է այդպէս անպատկառ համարձակութեամբ խառնադարում մարդկանց խաղաղութիւնը, թունաւորում հասարակական կազմը, խոչընդոտ հանդիսանում այն յուսատեւ մտաւոր ընթացքի առաջ, որը թէեւ յարմար լայնորով, բայց ուղիղ չափը ընտրած՝ առաջ է ընթանում իր օտնների ներածին չափով: Ահա այն հանգիստը, որ շնորհիւ մեր անտարբերութեան, դեռ չարունակում է երկմտութեան տեղիք առնել, վիճելի առարկայ լինել, բանակ կազմել: Եւ ո՞վ կարող է երաշխաւորել, որ մի օր էլ բոլորովին յաղթված չենք լինի այդ բանակից, քանի որ հասարակութիւնը ինքը եւ զենք, եւ զինուոր է մատակարարում նրան՝ իր դէմ կռուելու համար:

Եւ ծնել, եւ զենք տալ՝ իր դէմ կռուելու, անա այն ցաւալի եւ դժբաղդաքնող պատիժ պատուհասը, որ մարդկութիւնը իր հետ ծնել եւ իր համար աշխարհ է բերել՝ որպէս անբաժան իրար:

Բժիշկ Տրիանգաֆիլիդիսի տասը տարի քաղաքային հիւանդանոցում աւագ բժշկի պաշտօն վարելու համար շնորհակալութիւն յայտնելու ինքն ըստ ինքեան մի շատ հասարակ բան էր, եւ ամեն ոք պարզ զգաց այդ անելու, բայց արեւ յանկարծ սկսվում են ուղարկայի եւ դուռնայի դէմ իրար ետեւից լոյս տեսնել «Человек в Бѣдомости»-ի մէջ՝ նրա խմբագրի սովորական քառամսիկ «Բեմօրով» համեմատ յօդուածները, որոնք միայն մի նպատակ ունէին — բժշկի համակրողներին գրգռել եւ ընդամացնել իրան դիմադրող դուռնայի կուսակցութեան դէմ: Հարցը բարդվում է, սակայն սկսում է ուրիշ հոտ փչել, մի հոտ, որը վաղուց արդէն զգուշանք է պատճառում ամենքին: Վերջապէս բանը հասնում է այն տեղը, որ դուռնայի շնորհակալութեան հարցը դնում է ընդհանրութեան:

Եւ սեւացնելով նրան, այդպիսով մի անգամ էլ արտայայտում է այն արհամարհանքը, որ տաժուում է նա դէպի այդ թերթի եւ նրա խմբագրի բնածն անվայել դիւրը: Այդպիսով թէեւ ճիշդ է, զոհը եղաւ Տրիանգաֆիլիդիսը, բայց եւ միւս կողմից առաջադէմ կուսակցութիւնը մնաց իր կոչման բարձրութեան վրա եւ թույլ չը տուեց իրան ընկճվելու այնպիսի մի անպատկառ ախտաբանից, որ բացի կուսակցութեան ցեխառնելուց՝ ուրիշ բանի ընդունակ չէ, որը պարտադրաբար պէս ժողովրդի քրտինքով ապրում է եւ մի եւ նոյն ժամանակ, փոխանակ նրա շահերին ծառայելու, մի խառնակիչ չարիք է դառնում եւ նրա խաղաղ կեանքը վրդովում:

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 23-ին

Թէ որ աստիճան անխնամք են մեծանում եւ տնտեսագրութեան են մատնված մեր գաւակները՝ երեւում է այն օրոտանմիկ տեսարանից, որ տեղի ունեցաւ այստեղ ամսի 18-ին:

Շուշու գաւառի Առաջածոր գիւղացի 14 տարեկան մի պատանի, Աղաբէք անունով, քանի ամիսներից ի վեր ծառայելով այստեղ մի դերձակի մօտ, վերջին օրերս թողնում — հետեւում է իր վարպետից եւ սկսում է թափառել քաղաքում մի քանի օր շարունակ: Վարպետը այդ մասին յայտնում է նրա ազգականին, որի միջնորդութեամբ պատանին ընդունված էր աշակերտ, սակայն վերջինս իր բարոյական պարտքը չը համարելով կարեւոր հագագողութիւն անելը, թողնում է երեւոյին նոյն անտեղութեան մէջ, որի հետեւանքը լինում է այն, որ մի օր էլ, երբ պատանին չըլտալու էր շոգնեցաւային ընկերութիւնների նաւահանգստի մօտ կանգնած՝ ապրանքատար գնացքների առաջնորդում, մնում է յանկարծ վերելից ընկած բռնակի հակի տակ, որի ծանրութիւնից սաստիկ ճնշումն օտանալով՝ ուղեղային արհեստութիւն է առաջանում եւ անմիջապէս վախճանվում է, տեղական զինուորական հիւանդանոցը փոխադրվելով:

Լուրը անմիջապէս տարածվում է քաղաքում, սակայն դժբաղդ մանուկի աղէտայի մահը ազգականներից եւ ոչ մէկին չէ հետաքրքրում եւ ոչ մէկը նրանցից տեղից չէ շարժվում թշուառ մանուկի դիակին վերջին յարգանքը մատուցանելու ինչպէս լսեցի ոտակաւորապէս ծառայողից, հանգանակվել է պատանու թաղման համար (դա՛ռաղի եւ պատանացուի) տասնեակները բուրլի, որը, ի հարկէ, երբեք պատել չէ բերում քաղաքում գտնվող՝ նրա հարուստ ազգականներին, որոնք թշուառ պատանու ազգակցութիւնը անգամ մերժեցին վերջին օրպէսին: Երբ օր դիակը հիւանդանոցում մնալուց յետո՞ք՝ պաշտօնագրէս յանձնարարովից ինձ թաղման կարգ կատարել: Ամսի 21-ին երկու զինուորների եւ հանգուցեալի վարպետի ուղեկցութեամբ ամբողջովին դիակը հասարակաց դերեզմանատան ուսուցիչ բաժանմունքում:

Վերոյիշեալ տիտը եւ սրտաճմիկ դէպքը թող օրինակ եւ խրատական լինի մեր հայ ժողովրդի այն մասը համար, որ անհամար խնամք թէ մեծ եւ թէ փոքր, դիմում են դէպի Միջին-Ասիա, կարծելով՝ թէ մի նոր Կալիֆօրնիա է բացվելու իր առաջ: Խղճացէք ձեր անխորճ եւ անմեղ գաւակներին, որոնք՝ դեռ եւս ծնողական փայփայանքին ու սէրին են կարօտ, եւ այլ եւս վատանալով դարեօրտ ազգականների ու բարեկամների վրա, մի ուղարկէք այնպիսի հեռաւոր վայրեր:

Քահանայ

ՆԱՄԱԿ ԽՐԱՍՆՕՎՈՒՄԻՑ

Բաց նամակ արժ. Տէր-Գրիգորին

Թիֆլիս, հոկտեմբերի 25-ին
«Չաքար Դարդանանցի» կտակը եւ «Մշակի» գաղտնիքները խորագրով ձեր հրատարակած թերթի մէջ յիշում էր եւ ինձ տեսելով: «Մալար կաթնոլիկ» 1889 թ. յունիս 19-ին ուղարկում է մեզ կրեզակով Թիֆլիս իր թերթի արժ. տ. Արտէրի մօտ, որի մօտ գտնվում էր հանգուցեալի հարուստ մատենադարանը...»

«Բայց ցաւում ենք, որ մենք հնար չուենք օգտվել մեր պատմական հրատարակութիւնների համար հանգ. Հայրապետի այն բազմաթիւ հարուստ նիւթերից, որոնք փիցցան մասնաւոր տների պաշտպաններում»:

Արժ. Տէր-Գրիգոր, հաճեցէք պատասխանել հետեւեալ հարցերին:

Ա. Ուսումը գիտէ՞ք՝ որ ինձ մօտ գտնվում էր հանգուցեալի մատենադարանը:

Բ. Երբ դիտեցիք եւ տեսաք ինձ մօտ այդ մատենադարանը:
Գ. Ինչպիսի կամ երբ ստուգեցիք մատենադարանի հարստութիւնը:
Դ. Ո՞ր մատենաւոր տների պաշտպաններում փիցցին հանգ. Հայրապետի բազմաթիւ հարուստ նիւթերը:
Ե. Ի՞նչ նիւթեր էին դրանք եւ որ չափով կամ որակով բազմաթիւնաւոր:
Առ այժմ այդքան:
Սպասում եմ — հշ բառախաղի, այլ մարդկային եւ քահանայապետի պատասխանիդ:
Արաքս աւագ քահ. Բազմաթիւ

ՆԱՄԱԿ ԽՐԱՍՆՕՎՈՒՄԻՑ

Մօզդակ, հոկտեմբերի 19-ին
Կարգավոր «Մշակի» 229 համարում տպված լուրը Մօզդակից՝ պարտք եմ համարում ձեր մօտաւորութիւնը պարգելու համար մի երկու խօսք տանել:

Դէպքը տեղի է ունեցել ճիշդ ա. Ստեփանու եկեղեցում, ուր քահանայ եմ եւս. ուսուցիչն է Տրեքան Աւագեան անունով մի զգալի պատանի, որ կրօն է դաս տալիս այստեղի օրիորդաց դպրոցում: Նրա ընաւորութեան մի քանի վատ առանձնայատկութիւնները ինձ դուր չը գալով՝ ցանկացաւ խելի իմ յարաբերութիւնը նրա հետ Անթիք պատանից. Գէորգեան ձեռնարանի տարեգրքին ցանկացաւ հեռագրով շնորհաւորել մատակցելու տրամադրութիւն յայտնեցին եւ միւս ձեռնարանակները, որոնք ուսուցչու թեմային պարագում տեղիս արքունական դպրոցներում: Երբ վերոյիշեալ ուսուցչի մասին էլ խօսք եղաւ, եւ բաց է թող մերժեցի եւ յայտնեց, որ եթէ նա էլ պիտի մասնակցէ, եւ առանձին կը հեռագրեն իմ մերժումը: Երբ ինքն է եղել նրան. «Ահա այդ իսկ լուրը ճշդելու համար երբ Աւագեանը եկեղեցում ինձ հարց տուեց, եւ նրան պատասխանեցի այնպէս, ինչպէս որ ասել էի: Բացարձակութիւն ինքզնիք գէպքում պատասխանեցի, որ ունեւ հիմունքներ, եւ յիշեց նրանցից մի երկուսը եւ նրա հետեւի խօսակցութիւնը, որ տեղի ունեցաւ շատ ցած ձայնով, կարճ միջոցում եւ առանց որ եւ խանգարման, որի մասին կարող են վկայել ներկայ եղողները: Խօսակցութեան ընթացքում տեղի չէ ունեցել ոչ մի անվայել խօսք եւ անպատկառ հայեցանք — դրանք բոլորը լրատուելի հիւանդ երեւակայութեան ծնունդ են:

Յակօր քահանայ Խաչմանքեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՑ

Օրէնայից Գ. Յ. Արքանապետ գրում է մեզ. «Գալով Օրէնա եւ լսելով, որ Մ. Նիկաթեան գտնվում է այստեղի հիւանդանոցում՝ եւ պարտք համարեցի գրելու եւ տեղեկութիւններ ստանալ իմ նախկին ուսուցչի առողջութեան մասին: Մ. Նիկաթեան գտնվում է այստեղ բժիշկ Դրօշնիսի մասնաւոր հիւանդանոցում: Չը նայելով իմ բոլոր թախանձանքներին՝ բժիշկ Դրօշնիս չը համաձայնեց, որ ես տեսնեմ Նիկաթեանին, առարկելով, թէ դա անօգուտ է, քանի որ հիւանդը իր ծանօթներին չէ ճանաչում: Եւ ես գրանով աւելի անհանգստացրած կը լինեմ նրան, մինչդեռ հիւանդի դրութիւնը պահանջում է անպայման խաղաղ եւ անդորր կեանք: Մի եւ նոյն ժամանակ բժիշկը գտնադատվեց, որ այդ դէն շարորդք արին է, ինչ Նիկաթեան գտնվում է իր հիւանդանոցում, սակայն ինքը միայն Չամվայ իրան հասանելիք փողն է ստացել: Ներքեւեան դպրոցի հոգաբարձութիւնից (ամսական տրվում է 150 բուրլի) եւ որ արդէն երկրորդ ամիսն է՝ ոչ ոքից փող չէ ստանում: Առհասարակ բժիշկը դժկամութեամբ է տեղեկութիւններ տալիս Նիկաթեանի մասին եւ շատ դժգոհ է, որ փող չեն ուղարկում նրա բժշկութեան համար, եւ ինձ առանձնապէս խնդրեց գրել ուր հարկն է այդ մասին, որը եւս օր րանով պարտքս եմ համարում կատարել: Իր ժըշկի պատասխաններից եւս այն տպաւորութիւնը ստացաւ, որ Նիկաթեանի առողջութեան մէջ փոփոխութիւն չէ եղել, եւ եւ երկուսը եմ կրում, որ մի գուցէ փող չը ստանալու պատճառով հիւանդը վնասվել: Մեզ անհասկանալի է, թէ ինչու Նիկաթեանին տեղաւորել են մի մասնաւոր հիւանդանոցում»:

Թիֆլիսի քաղաքային դուռնայի վերջին նիւտում մերժեց ժողովրդական դպրոցների տեսիլ խնդրելը՝ նպատակ տալու քաղաքի կողմից մի քանի հայ ծխական դպրոցներին, որոնք ներկայումս գտնվում են դերեզմանայի հոկուրութեան տակ:

Երէկ, հոկտեմբերի 29-ին, Անդրկովկասեան երկաթուղու ինժեներները կազմված մի մասնաժողով, ուսուսական երկաթուղիների աւագ վերապետուհ Կեռեթի նախագահութեամբ, ճա-

Электротпечатная Груз. Издат. Т—ва, Б.-Ванская ул.